ՆՈՐԱՅՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

7.

Ստոքհոլմ, 13 Ապրիլ 1898.

Մեծ. Տէր Միխայէլ Թամամշեանց,

Անցեալ տարի երբ ծանուցիք ինձ ի Ստոքհոլմ որ Լամբրոնացւոյ համար ընդօրինակեալ Խորենացւոյ Պատմութիւն Ձեր քով կը գտնուի, մեծապէս ուրախացայ, քանզի ես անյայտացեալ կը համարէի զայդ պատուական Ձեռագիր։ Կ'ուզէ՞ք անչափ ուրախութիւն պատճառել ինձ, երեք ամսոյ համար փոխ տալով զԽորենացիդ, որպէսզի ընդօրինակեմ զայն և առ Ձեզ վերադարձնեմ։ Եթէ հաճիք զայս մեծ շնորհս ընել ինձ, կարէք յղել զՁեռագիրդ առ Ռուսի Տէրութեան Պաշտօնեայն ի Ստոքհոլմ (à Son Exc. M. le Ministre de Russie, à Stockholm), գրելով նմա որ Ձեռագիրն իմ քովս (Néandre de Byzance Norayr, 15 Fredsgatan, Stockholm) պիտի մնայ երեք ամիս, և յետ երեք ամսոյ պիտի յանձնեմ զայն վսեմ. Պաշտօնեայն, որպէսզի նա ինքն հասցնէ զայն առ Ձեզ իմ ծախուք, (յայտնի է թէ ապահովագրեալ, assuré)։ Ինչպէս ըսի Ձեզ՝ զոհ չեմ կարինեանցի բաղդատութեամբն. և որովհետև դիտաւորութիւնս է Խորենացւոյ նոր բնագիր մի պատրաստել և ջրել զկարիէրի անտեղի կարծիս, մեծապէս օգտակար պիտի ըլլայ ինձ Ձեռագիրդ, և ես յանհունս երախտապարտ պիտի մնամ Ձեզ և պիտի յիշեմ անբաւ շնորհակալօք զՁեր անուն։

Կը յուսամ որ ողջ առողջ էք հանդերձ Ձեր սիրասուն զաւակօք։

Հաճեցէք ընդունիլ, Մեծ. Տէր, զիմ խորին մեծարանաց հաւաստիս։

Խ. Ծ. Նորայր.

M. Michel Tamamchoff,
Directeur-Gérant de la Banque de Commerce de Tiflis, Conseiller municipal de la ville de Tiflis.
Tiflis (Russie)

8.

Ստոքհոլմ, 13 Յունիս 1898.

Մեծապատիւ Տէր Սմբատ Շահազիզեան,

Ընկալայ զՁեր պատուական Ամառնային Նամակներն՝ զոր բարեհաճած էիք յղել առ իս, և ընթերցայ ախորժելով։ Զուարթ և միանգամայն հրահանգիչ են գրութիւնքդ, և լի ողջամտութեամբ։ Ինչ որ կ'ըսէք Տ. Խալաթեանի քննադատութեան նկատմամբ, զոր օրինակ յերեսս 40 և 67, համամիտ եմ և ես Ձեր ըսածներուն։ Դեղեցիկ է նաև խորհրդածութիւնդ, 106–107, որ եթէ Խորենացի է–թ դարերու մատենագիր է, ի՞նչպէս կ'ըլլայ որ յայդ դարերէդ էական կամ չօշափելի նշան մի թողած չըլլայ իւր Պատմութեան մէջ։

Մատուցանելով Մեծապատիւ Տեառնդ զիմ ջերմ շնորհակալիս, մնամ ամենայն յարգանօք

Խ. Ծ. Նորայր.

M. Sembat Chahazizian
Moscou (Russie)

9.

Ստոքհոլմ, 5 Սեպտեմբեր 1898.

Մեծ. Տէր Լեւոն Մսերեանց,

Ընկալայ զՁեր քարտէսն Օգոստ. 1-ի, և զերկուս տետրակսն (Մխիթարեանք, և Հայ գաւառաբարբառք)։ Ցոյժ շնորհակալ եմ։ Դրաբարի մասին իմ կարծիքս միշտ այն եղած է թէ Ե դարու Հայք ոչ միայն կը հասկանային, այլ և կը խօսէին պարզ գրաբար, զորոյ օրինակն տուած է մեզ Փարպեցին իւր Պատմութեամբ և Թղթով, որ գրուած են ո՛չ վարդապետի կամ վարժապետի համար՝ այլ աշխարհական իշխանի։

Խորին յարգանօք

Նորայր.

M. Lévon Msériantz
Menchikowa Bachnia
Maison Milowanoff
Moscou (Russie)

digitised by A.R.A.R.@

10.

Ստոկհոլմ, 12 Յունուար 1899.

Առ Դերապատիւ Տէր
Տէր Սահակ Եպիսկոպոս Խապայեան,

Դերապատիւ Տէր Եպիսկոպոս,

Շատ կարեւոր հրատարակութիւն մի է «Բաղդատութիւն Տպագիր Սոկրատի և Երուսաղէմի Ձեռագրին», յորմէ օրինակ մի բարեհաճած էիք յղել ինձ. կը մատուցանեմ Ձեզ զիմ ջերմ շնորհակալութիւն։

Երբ աւարտի իմ գործս Կորիւն Վարդապետ եւ Նորին Թարգմանութիւնք, պիտի յղեմ Ձեզ օրինակ մի։ Խնդրեմ ըսէք ինձ թէ ինչ հասցէին պարտիմ առաքել, և Յերուսաղէ՞մ թէ յերուսաղէմատունն Կ. Պոլսի։ Կանխիւ ծանուցանեմ որ երկրիդ գրաքննութեան համար վնասակար պիտի նկատուի երկասիրութիւնս, և եթէ գրաքննութենէն անցնի՝ հաւանական է որ չհասնի ի ձեռքդ։ Եթէ կայ ապահով ճանապարհ կամ միջոց՝ հաճեցէք ծանուցանել ինձ։

Փիտեմ յամսօրեայ Հանդիսէ (1894, 363 ա) որ ի մատենադարանի վանացդ կայ Տաղարան տպագրեալ ի Վենետիկ յամին 1513։ Մեծապէս կը փափագիմ ունել զամբողջական ընդօրինակութիւն Տաղարանիդ, յստակ գրով, երես առ երես՝ նշանակելով զիւրաքանչիւր երեսի թիւն, ճիշտ այնպէս՝ ինչպէս է ի տպագրին։ Ո՞րչափ երախտապարտ պիտի մնամ Դերապատիւ Տեառնդ եթէ բարեհաճիք կատարել զիմ փափագն։ Եթէ իմ սակաւ գիտութեամբս Հայերէն գրականութեան կարենամ ոևէ ծառայութիւն մատուցանել Ձեզ՝ սիրով պատրաստ եմ։

Մաղթելով Դերապատիւ Տեառնդ քաջողջութիւն, մնամ խորին մեծարանօք

Խոնարհ ծառայ

Նորայր Ն. Բիւզանդացի

Հաճեցէք նշանակել գաղղիերէն զՁեր հասցէն։ Իսկ իմս է Norayr de Byzance, Fredsgaton 15, Stockholm.

à Sa Grandeur Monseigneur Sahak Khabaïan
au Couvent Armenien de St Jacques Jérusalem

11.

Ստոկհոլմ, 16 Մարս 1899.

Յոյժ Ազնիւ եւ Սիրելի Բարեկամ
Վսեմապատիւ Տէր Կ. Եզեանց,

Ընկալայ զՁեր պատուական թուղթն Յունուար 15/28-ի։

Զունիմ զգաղղիական թարգմանութիւն Լաստիվերտացւոյ ի Prud'homme-է, *և չնորհակալութեամբ կ'ընդունիմ զխոստացեալդ։ Ընդ նմին կը խնդրեմ որ բարեհաճիք յղել ինձ (փոխ) զտպագրեալ Տաղարանն Պետրոսի Ղափանցւոյ, Կ. Պոլիս, ՌՄԻԱ, զոր ունիք ի գրադարանիդ։*

Նահապետի Սիրոյ Տաղերն չեմ կարծեր որ կարենան հրատարակել ի Լուսայի։ Գայթագղել սիրող մարդիկն հաւանական է որ դատափետեն զպատուականն Տէր Գիւտ եթէ նորա Հանդիսին մէջ երեւնան տուփական բանաստեղծութիւններ չատ աւելի կրակոտ քան զԹուլկուրանցւոյն, քան զԱղթամարցւոյն և զՍայաթ Նովայի։

Մաղթելով Վսեմական Տեառնդ քաջողջութիւն և մատուցանելով զյարգանաց ողջոյնս ամուսնիս, մնամ խորին մեծարանօք

Անձնանուէր Ձեր

Նորայր.

12.

Ստոկհոլմ, 11 Մայիս 1899.

Մեծապատիւ Տէր Ստ. Մալխասեանց,

Ընկալայ ի 11 Ապրիլ զպատուական գործդ Սեբէոսի Պատմութիւնը եւ Մ. Խորենացի, և կը մատուցանեմ զիմ շնորհակալիս հանդերձ ամենայն մեծարանօք։

Նորայր.

---

digitised by A.R.A.R.@

13.

Ստոկհոլմ, 11 Մայիս 1899.

Մեծ. Տէր Կ. Կոստանեանց,

Մարտի 3-ի նամակաւս շնորհակալութեամբ ծանուցի Ձեզ որ ընդունած եմ զպատուական նուէրդ Տաղից Գր. Աղթամարցւոյ և Մկ. Նաղաշի: *Խնդրեցի նաև որ բարեհաճիք յղել ինձ օրինակ մի ի Նորատիպ* Մատթէոսի Ուռհայեցւոյ, *զի Վսեմ. Տէր Կ. Եզեանց գրած է ինձ որ երբ պէտս ունենամ նախնեաց տպագրեալ մատենագրութեանց յէջմիածնէ՝ առ Ձեզ դիմեմ։ Նոյն նամակի մէջ ընդարձակօրէն գրեցի և* զՏաղից Նահապետի Խառակոնիսեցւոյ *և հաղորդեցի Ձեզ զօրինակ Տաղի նորին՝ որ կը սկսի «Ժամիկ մ'աչերուդ ի զատ երբ կացի՝ նա զիս մոռացար»։ Մինչև այսօր չընկալայ ի Ձէնջ պատասխան, և կը կասկածիմ որ նամակս հասած չէ ձեռադ։ Հաճեցէք տեղեկութիւն տալ ինձ, որպէս զի եթէ նամակս կորսուած է՝ պահանջեմ ի Ստոքհոլմի թղթատանէն։*

Խորին մեծարանօք

Նորայր.

14.

Ստոկհոլմ, 6 Փետրուար 1900.

Մեծ. Տ. Կ. Յ. Բասմաջեան,

Ընկալայ զՓետր. 1-ի քարտեդ։ Զ'ունիմ զգործն Tikkonen-*ի. նոյն իսկ եթէ ունենայի, անհնար պիտի ըլլար ինձ կատարել զփափագդ։*

Շնորհակալ եմ Բանասիրիդ *Գ. գրոց։ Ի* Լումայ *հանդիսի (Տփղիս, 1896, Յունիս, երեսք 309–328) հրատարակած եմ զՅառաջաբանն Փարպեցւոյ Պատմութեան, բաւական տարբեր ի Մեծ. Հ. Պարոնեանի հրատարակածէն (Բանասէր Գ. Գիրք, երեսք 267–279)։ Խնդրեմ ծանուցանէք զայս Հ. Պարոնեանի սիրոյ ողջունիւս կը փափագեմ որ կարդայ զայն և յայտնէ զիւր կարծիս յառաջիկայ* Բանասիրի։

Պատմութիւնն Ֆրա Աւգոստինոսի *(Բանասէր, Գ. երեսք 222–237) վաղ իսկ հրատարակեալ է ի Ք. Պատկանեանէ ի տետրակին* Նշխարք Մատենագրութեանց Հայոց, *Պետերբուրգ 1884, երեսք 5–26, վերնագրեալ.— «Աւգոստինոսի Բագեցւոյ Ճանապարհորդութիւն յԵւրոպայ»։*

Ամենայն մեծարանօք

խ. ծ. սգազգած Նորայր.

M. Basmadjian
112, Boulr. Rochechouart, Paris.

15.

Ստոկհոլմ, 2 Ապրիլ 1900.

Մեծապատիւ Հայր Գարեգին Վարդ.
Յովսէփեան,

Ընկալայ զՁեր պատուական նամակն Յունուար 30-ի (հ. տ.)։ Յառաջ քան զամենայն կը մատուցանեմ Ձեզ զիմ սրտագին շնորհակալութիւնս ազնիւ ցաւակցութեանդ համար։ Կորուստս շատ մեծ է. ամեն օր ոչ այլ ինչ կը խնդրեմ յԱստուծոյ բայց եթէ զօրութիւն կրելոյ սիրով և համբերութեամբ զայն թշուառութիւն յոր ընկղմեցայ իւր ամենասուրբ կամօք։

Խնդակից եմ Մեծապատիւ Վարդապետիդ, որ Հոգեւոր Տեառնն կարգադրութեամբ ստանձներ էք զպաշտօն խմբագրութեան Արարատի։ *Վստահ եմ որ ամենուս սիրելի* Արարատն *մեծապէս պիտի շահի՝ ունելով ի գլուխ Ձեզ նման եռանդուն և ուսումնասէր անձնաւորութիւն մի։ Ի սրտէ կը մաղթեմ կարողութիւն և լիուլի յաջողութիւն։*

Ահա տարին բոլորեցաւ յորմէ հետէ կորուսի զսիրելիս, և ես կ'անցընեմ օրերս կիսակենդան։ Երբ շնորհիւ Տեառն սթափիմ ի խոր սգոյս և կազդուրիմ, յօժարութեամբ կը կատարեմ զՁեր փափագն աշխատակցելոյ Արարատիդ։ *Շնորհակալ եմ մեծապէս* Արարատիդ *առաքման առ իմ նուաստութիւն։*

Խնդրեմ ողջունէք յինէն զՄեծ. Բարգուղիմէոս Վրդ. Գէորգեան, զորոյ ընկալայ զնամակն, կը պատասխանեմ յետ աւուրց։

Հաճեցէք ընդունիլ, Մեծապատիւ Վարդապետ, զիմ խորին մեծարանոց հաւաստիս։

Խ. Ծ. սգազգած Նորայր.

digitised by A.R.A.R.@